կայ հաստատ մինչ ցայսօր» (էջ 217) և այլն: Նույն կերպ զուգադրվում-զուգահեռվում են պատմագրքի գրության և նրանում վկայագրվող պատմության ժամանակները. «Եվ մինչեւ ցայժմ» (էջ 113), «Եւ այժմ յարդեանս ժամանակիս՝ որ է թուական մեր ՌՃԷ, յորում գրէաք զպատմութիւնս» (էջ 138), «և կայ անդէն մինչև ցայսօր» (էջ 177) և այլն:

Երբեմն պատմիչը մեկ պարբերությամբ պարագրկում է ժամանակը և ապա տալիս դրա պատճառաբանումը: Այսպիսի դեպքերում ժամանակը, ըստ էության, սեղմվում է. «Եւ այս ամենայն եղեալ է ի մէջ երկուց ամաց. վասն զի գալն Սրապիոն կաթուղիկոսին յէջմիածին և լինելոյ կաթուղիկոս. և ի նոյն ամի գալն շահին և ունելոյ զԹարվէզ՝ և զՆախչուան՝ և զԵրևան, և դառնալոյ Սրապիոնին ի տեղի իւր, և այլ բանք՝ զոր յայսմ ճառի պատմեցաք, ի մէջ երկուց ամաց եղեալ է, որ էր թուականն մեր ՌԾԲ և ՌԾԳ» (էջ 76) և այլն:

Իբրև գրական հատկանիշներով օժտված երկ՝ Դավրիժեցու պատմագրքին բնորոշ է նաև ***գեղարվեստական ժամանակ*** հասկացությունը, երբ ժամանակը որոշարկվում-հստակեցվում է ըստ տեքստ-շարադրանքի: Այդպիսի դեպքերում պատմիչն է տնօրինում ժամանակը. «Եւ արդ յետ այսց ամենից զոր պատմեցաք» (էջ 89), «Եւ մինչ ցայսօր և ցժամանակս, յորում հասաք...» (էջ 97), «Յետ անցիցս այսոցիկ» (էջ 142), «Յետ ժամանակաց անցելոց պատմութեանցդ՝ զոր յառայջ պատմեցաք» (էջ 180), «Զկնի ամենայնի այսոցիկ...» (էջ 200), «Եւ յաւուրս յայսոսիկ...» (էջ 205), «Դարձեալ ի սոյն ժամանակի» (էջ 216) և այլն:

Նշվածներից բացի, Դավրիժեցու պատմագրքում հանդիպում են բազմաթիվ այլ ժամանակային չափումներ, որոնք հենվում են տարաբնույթ աննշան իրադարձությունների, տեքստային-բովանդակային որոշ դրվագների վրա, ինչպես՝ «Բայց յետ ժամանակաց...» (էջ 144), «Եւ ապա յետ...» (էջ 146), «Յետ այսօրիկ...»